ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆ, N 112-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ (ԿԱՄ) ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԸ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Ալավերդի համայնքում տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյանները վարելու կարգը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Ալավերդի համայնքի՝
   1) տեղական տուրք վճարողների գրանցամատյանի ձևը՝ համաձայն հավելված 2-ի.
   2) տեղական վճար վճարողների գրանցամատյանի ձևը՝ համաձայն հավելված 3-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			

4.	ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ			
5.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
6.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
7.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
8.	ԱՄՐԱՍՏԱՆ	ՋԱՆԻՆՅԱՆ			
9.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
10.	ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ			
11.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
12.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
13.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
14.	ՍԻՄՈՆ	ՋԱԽԱՐՈՎ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2023թ., դեկտեմբերի 18,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

Հավելված N 1
Ալավերդի համայնքի ավագանու
18.12.2023թ. N 112-Ա որոշման

Կ Ա Ր Գ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ (ԿԱՄ) ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքում (այսուհետ՝ համայնք) տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառման գրանցամատյանների վարման կարգը:
2. Տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառումն իրականացվում է տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյաններում (այսուհետ՝ գրանցամատյան), որոնք վարվում են ըստ տեղական տուրքերի և վճարների առանձին տեսակների:
3. Գրանցամատյանները դասակարգվում են՝
   1) տեղական տուրք վճարող անձանց հաշվառման գրանցամատյաններ
   2) տեղական վճար վճարող անձանց հաշվառման գրանցամատյաններ:
4. Գրանցամատյանները վարվում են Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) համապատասխան ոլորտի բաժիններում՝ բաժինների պետերի պատասխանատվությամբ:
5. Գրանցամատյանները վարվում են ըստ տարիների:
6. Տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառումը իրականացվում է փաստաթղթային կամ էլեկտրոնային (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով) ձևով:
7. Գրանցամատյաններում առնվազն պետք է ներառվեն հետևյալ տվյալները՝
   1) գրանցամատյանի վարման տարեթիվը,
   2) տուրքի և (կամ) վճարի տեսակը,
   3) տուրք և (կամ) վճար վճարողների գրանցման հերթական համարը,
   4) համայնքի ղեկավարի որոշման համարը և տարեթիվը, որի հիման վրա գանձվել է տուրք և (կամ) վճար (լրացվում է առկայության դեպքում),
   5) տուրքի և (կամ) վճարի չափը,
   6) ժամանակահատվածը, որի համար վճարվել է տուրք և (կամ) վճար,
8. Գրանցամատյաններում ներառվում են նաև՝
   ա. Ֆիզիկական անձի անունը, ազգանունը (տվյալ լինելու դեպքում՝ հայրանունը),
   բ. անձը հաստատող փաստաթղթի տվյալները,
   գ.իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը, կազմակերպաիրավական տեսակը,
   դ. գործունեության հասցեն,
   ե. հարկ վճարողի հաշվառման համարը.
9. Համապատասխան բաժիններում տվյալ տարվա համար էլեկտրոնային ձևով վարվող գրանցամատյանները արխիվացվում են կրիչի և հանձնվում աշխատակազմին:

Հավելված N 2
Ալավերդի համայնքի ավագանու
18.12.2023թ. N 112-Ա որոշման

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

ՏՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ

Հ/Հ	ՎՃԱՐՈՂԻ			ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՏԵՍԱԿԸ	ՀՈՂՅԱՆ ԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ	ՎՃԱՐՄԱՆ		ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՄԱՆ		ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ		
	ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱ-ՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀՎՀՀ ԿԱՄ ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀԱՄԱՐԸ	ԳՈՐԾՈՒՆԵ-ՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՀԱՍՑԵ			ԱՄՍԱԹԻՎԸ	ԳՈՒՄԱՐԸ /ՀՀ դրամ/	ԹԻՎԸ	ԱՄՍԱԹԻՎԸ	N	ԱՄՍԱԹԻՎԸ	ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՑ ՀԱՏՎԱԾԸ

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

Հավելված N 3
Ալավերդի համայնքի ավագանու
18.12.2023թ. N 112-Ա որոշման

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

ՏՂԱԿԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ

Հ/Հ	ՎՃԱՐՈՂԻ			ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՏԵՍԱԿԸ	ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ՈՐՈՇՄԱՆ		ՎՃԱՐՄԱՆ	
	ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱ-ՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀՎՀՀ ԿԱՄ ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀԱՄԱՐԸ	ԳՈՐԾՈՒՆԵ-ՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՀԱՍՑԵ		N	ԱՄՍԱԹԻՎԸ	ԱՄՍԱԹԻՎՈՒՄ	ԳՈՒՄԱՐԸ /ՀՀ դրամ/

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ